«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Ռաշոյան Ազապի

Ուսումնական հաստատություն՝ Կաթնաղբյուրի Մ. Գալշոյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն ---------- 2
2. Վեց տարեկանների ճգնաժամը ---------- 3
3. Պատրաստվածությունը դպրոցական ուսումնառությանը ----- 9
4. Վեց տարեկան երեխաները դպրոցում ---------- 19
5. Առաջին դասարանցիները և ընտանիքը ---------- 22
6. Եզրակացություն ---------- 24
7. Օգտագործված գրականություն ---------- 26
8. Ներդիր ---------- 27

Ներածություն

Կրթական համակարգի անցումը 12-ամյա ուսուցման ենթադրեց վեց տարեկանների ընդգրկումը հանրակրթության մեջ:Այս հանգամանքը, բնականաբար, որոշակի դըժ-վարություն ներկայացրեց մի կողմից այդ համակազմի երեխաների հոգեբանական և ֆիզիկական առանձնահատկությունների հաշվառման, մյուս կողմից ուսումնական աշխատանքի կազմակերպման, ուսումնական միջավայրի ապահովման հարցերում: Անցումը 12-ամյա կրթության նոր խնդիրներ դրեց մասնագետների և ծնողների առջև: Ինչ խոսք նախադպրոցական տարիքը հատուկ ուշադրություն է պահանջում, իսկ այն տարիքը, երբ երեխան արդեն գնում է դպրոց, ավելի մեծ ուշադրություն է պահան-ջում: Այս տարիքում երեխան շատ փոփոխություններ է ունենում, ոչ միայն արտաքին, այլև հիմնականում ներքին: Սա զարգացման մի փուլից մյուսը անցնելու ժամա-նակահատվածն է: Այսօր շատ է խոսվում դպրոցին երեխաների պատրաստվածու-թյան մասին: Նախադպրոցական կրթության համակարգի ամենակարևոր խնդիրը երեխայի բազմակողմանի զարգացումն է և դպրոցին նախապատրաստելը: Երբեմն էլ ծնողների մոտ հարց է առաջանում՝ արդյո՞ք երեխան պատրաստ է դպրոց գնալուն: Այս խնդրի արդիականությունն էլ որոշեց հետազոտության թեման՝ «Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին»:Հետազոտության նպատակն է ուսումնասիրել երեխայի դպրոցին պատրաստվածությունը,դպրոցին պատրաստվածության չափանիշների բացահայտումը, իսկ հետազոտության առարկան երեխաներին դպրոցին պատրաստելու գործընթացն է:

2. Վեց տարեկանների ճգնաժամը

Ուսումնական ծրագրի սկզբնաղբյուրը երեխան է: Երեխաների մասին ունեցած գիտելիքը հիմք է ստեղծում ուսումնական ծրագրի կազմման համար, և այդպիսի գիտելիք մենք կարող ենք ձեռք բերել երեխայի հետ անմիջական շփման միջոցով:

Գոյություն ունեն տարիքային զարգացման որոշակի շրջաններ, ժամանակահատ-վածներ, երբ երեխայի հոգեկան, ֆիզիկական, սոցիալական զարգացու,մ ընթանում է զարգացման ընդհանուր մեխանիզմներով, օրենքներով ու օրինաչափություններով: Սակայն տարիքային այդ փուլերի մեջ յուրաքանչյուր տարիք և ժամանակահատված ևս ունի իր զարգացման առանձնահատկությունները:Այս տեսակետից վեց տարեկան երեխան, որը գտնվում է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքային շրջանների սահմանագծում, իր մտավոր զարգացման մակարդակով, խոսքով, աշխարհընկալմամբ, շփումներով, ֆիզիկական ու ֆիզիոլոգիական հնարավորու-թյուններով առանձնանում է յոթ տարեկանից, հետևաբար, նրա հետ չի կարելի վար-վել այնպես, ինչպես յոթ տարեկան երեխայի հետ:

Լ. Ս. Վիգոտսկին որպես տարիքային փուլերի չափանիշ դիտարկում է հոգե-կան ոլորտում նորագոյացությունները, որոնք բնորոշ են զարգացման որոշակի փուլի համար: Տարիքային նորագոյացություն ասելով հասկանում ենք անձի ձևա-վորման և գործունեության այն նոր տիպը, հոգեկան և սոցիալական այն փոփոխու-թյունները, որոնք առաջին անգամ դրսևորվում են այդ տարիքում, և որոնցով պայ-մանավորված է երեխայի զարգացման ընթացքն այդ փուլում:

Հոգեկան ոլորտի տարիքին բնորոշ փոփոխությունները կատարվում են կա՛մ կտրուկ և միանգամից, կա՛մ էլ դանդաղորեն և որոշակի հետևողականությամբ:

Կայուն ժամանակահատվածներում երեխայի զարգացումն ունի համեմատաբար դանդաղ, էվոլյուցիոն բնույթ: Այդ ժամանակահատվածը ընդգրկում է մի քանի տարի: Հոգեկան ոլորտում փոփոխությունները սահուն են տեղի ունենում և հաճախ արտա-քուստ չեն նկատվում: Միայն համեմատական վերլուծության միջոցով (տարիքային փուլի սկզբում և վերջում) կարելի է նկատել փոփոխությունները: Համաձայն Լ. Վի-գոտսկու առանձնացնում են երեխայի տարիքային զարգացման հետևյալ կայուն փուլերը՝

- մանկիկություն (2 ամսականից -1 տարեկան)
- վաղ մանկություն (1-3 տարեկան)
- նախադպրոցական տարիք (3-6 (7) տարեկան)
- կրտսեր դպրոցական տարիք (6-11 տարեկան)
- դեռահասության տարիք (11-15 տարեկան)
- ավագ դպրոցական տարիք (15-17տարեկան)

Ճգնաժամային փուլերը համեմատաբար կարճ են տևում՝ մի քանի ամսից մինչև մեկ տարի, երբեմն 2 տարի: Այդ ժամանակահատվածում երեխայի հոգեկան աշխարում տեղի են ունենում հիմնավոր փոփոխություններ:

Տարիքային ճգնաժամ ասելով հասկանում են տարիքային տվյալ փուլում դրսևորվող հոգեբանական էական փոփոխությունների և դրանց հետ կապված ուժեղ ապրումների ընդհանրությունը: Այս փուլերում նկատվում են երեխայի անձի զարգաց-ման նշանակալի փոփոխություններ:

Ճգնաժամային փուլերն են՝

-նորածնի ճգնաժամ

-1 տարեկանի ճգնաժամ

-3 տարեկանի ճգնաժամ

-6 կամ 7 տարեկանի ճգնաժամ

-դեռահասության ճգնաժամ (12-14տ.)

-պատանեկության ճգնաժամ (17-18տ.)

Երեխան ճգնաժամային փուլերում արդեն ունեցած կարողություններից ավելի շատ կորցնում է, քան ձեռք է բերում նորը, կորչում է հետաքրքրությունը նախկին խաղալիքների հանդեպ, խախտվում են ջերմ հարաբերությունները շրջապատող մարդկանց հետ, երեխան հրաժարվում է վարքային կանոններին ենթարկվելուց:

Տարբեր երեխաների մոտ ճգնաժամային փուլերը տարբեր կերպ են ընթանում: Որոշ երեխաների մոտ դրանք հարթ, հանդարտ ընթացք ունեն, մյուսների մոտ սուր և հիվանդագին դրսևորումներ են ունենում:

Շատ կարևոր է տարբերել ճգնաժամի ախտանիշները կայուն փուլերի նեգատիվ պահերից (մանկական սուտ, նախանձ և այլն), որովհետև մեծահասակի վարքը տարբեր ախտանիշների դեպքում էապես տարբերվում է:

Ընդունված է տարբերել ճգնաժամի 7 նշաններ՝

Նեգատիվիզմ. երեխան չի ուզում որևիցե բան անել, որովհետև մեծահասակն էարել այդ առաջարկը: Մանկական նեգատիվիզմը տարբերվում է սովորական չլսելուց նրանով, որ նեգատիվիզմի դրդապատճառը բացասական վերաբերմունքն է մեծահասակների պահանջի նկատմամբ անկախ բովանդակությունից, իսկ չլսելու դրդապատճառը մեծահասակի առաջադրանքը կատարելու ցանկության բացակայությունն է:

Համառություն. երեխան պնդում է ինչ-որ բան ոչ թե նրա համար, որ նա դա ուզում է, այլ որովհետև պահանջել է: Համառության դրդապատճառը ինքնահաստատման ձգտումն է:

Ինքնուրույնություն. ամեն ինչ ինքնուրույն անելու ձգտում: Այս բոլոր ախտանիշները ունեն նույն հիմքը՝ շրջապատի կողմից ընդունված լինելու պահանջմունք, ինքնուրույնության ձգտում:

Կամակորություն. վառ արտահայտվում է 3 տարեկանի ճգնաժամային փուլում: Ի տարբերություն նեգատիվիզմի արտահայտվում է ոչ թե մեծահասակների դեմ, այլ ընդհանրապես իշխում է հակառակության ոգին. չի ուզում կատարել ցանկացած մարդու ասածը:

Արժեզրկում. մեծահասակների հանդեպ կոպիտ վերաբերմունք է դրսևորում (կարող է ասել վատ բառեր, կոպտել և այլն), ինչպես նաև անխնա և անփույթ է վերաբերվում իրերին (պատռում է գրքերը, կոտրում է խաղալիքները):

Բռնակալություն (դեսպոտիզմ). երեխան ձգտում է իշխանություն ձեռք բերել շրջապատի հանդեպ, ենթարկել իր ցանկություններին:

Ճգնաժամի դրական կողմն այն է, որ երեխան դառնում է ինքնուրույն, հեշտանում է մեծահասակից առանձնանալու գործընթացը:

Երեխայի զարգացումը պայմանավորված է մտերիմ մեծահասակի հետ շփումով: Երեխան մեծահասակի հետ շփվելու ընթացքում ձեռք է բերում մարդկության փորձը: Շփման միջոցով մեծահասակները (առաջին հերթին ծնողները) ազդում են երեխայի վրա: Մեծահասակների հետ շփման պակասը վաղ զարգացման փուլերում բացասասական է անդրադառնում ոչ միայն մտավոր, այլ նաև անձի ընդհանուր զարացման վրա:

6 (7) տարեկանի ճգնաժամ

Այս տարիքում երեխան կորցնում է այն անմիջականությունը և պարզամտությունը, որ ուներ մինչ այդ: Այդպիսի փոփոխությունների պատճառը երեխայի գիտակցության մեջ ներքին և արտաքին կյանքի տարբերակումն է:

6 տարեկան երեխան արագորեն աճում է ֆիզիկապես, և դրա հետ մեկտեղ տեղի են ունենում որոշակի փոփոխություններ նրա օրգանիզմում: Երեխան կտրուկ փոխվում է, դառնում է քմահաճ, վարքում նկատվում են որոշակի ձևական, արհեստական, անհեթեթ դրսևորումներ, ծամածռություն. երեխան, կարծես, ծաղրածուի դեր է կատարում:

Կարևորագույն ձեռքբերումներից է սեփական «ես»-ի գիտակցումը և ներքին սոցիալական դիրքի ձևավորումը: Ի հայտ է գալիս վառ արտահայտված ձգտում կյանքում մեծա-հասակի դիրք զբաղեցնելու և կատարելու նոր գործունեություն: Դպրոցական ուսուցման պայմաններում դա առաջին հերթին արտահայտվում է դպրոցականի սոցիալական դիրք զբաղեցնելու ձգտումով:

Ճգնաժամի արդյունքում երեխան սկսում է գիտակցել սեփական զգացմունքները, հոգեվիճակները, հասկանում է, թե ինչ է նշանակում «Ես ուրախ եմ», «Ես տխուր եմ» և այլն: Դրա շնորհիվ նա այլ կերպ է սկսում վերաբերվել ինքն իրեն, սեփական գործողություններին և զգացմունքներին գիտակցված գնահատական է տալիս: Այս տարիքի հիմնական կարևոր ձեռքբերումը ինքնասիրության և ինքնագնահատականի ձևավորումն է. այս փուլում խիստ կարևորվում է երեխային շրջապատող մեծահասակների դերը:

Այսինքն՝ վեց տարեկան հասակում ճգնաժամի դրսևորումը խոսում է այն մասին, որ երեխան սոցիալական առումով պատրաստ է դպրոցական ուսուցման համար:

Երեխաների զարգացումային պահանջներին համապատասխանող պարապմունքներ և ուսումնական ծրագրեր ստեղծելու նպատակով հարկ է հաշվի առնել վեց տարեկան երեխայի հատկանիշները: Դրանք չպետք է դիտվեն որպես պարտադիր չափորոշիչներ: Պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր երեխա եզակի է, արդյունք է յուրահատուկ մշակույթի, ընտանիքի, միջավայրի, առողջական, խառնվածքային, անհատական կացության:Այս գործոնները ամենևին քարացած չեն կարող համարվել, քանզի երեխայի աճին զուգընթաց՝ դրանք հետզհետե փոփոխվում են:

Վեց տարեկան երեխայի աճի չափորոշիչներ

Ֆիզիկական

- Ունի ընթերցելու համար բավարար տեսողական դաշտ:
- Ավելի լավ է ըմբռնում մատների օգտագործման հնարավորությունները:
- Ցուցաբերում է շտապողականություն. Արագաշարժությունը վեց տարեկանների հատկանշական գիծն :
- Աղմկոտ է դասարանում:
- Աթոռից հետ է ընկնում դեպի հետ:
- Սովորում է տարբերել աջն ու ձախը:
- Ցուցաբերում է բերանի խոռոչի (ատամնաշարերի) ակտիվություն՝ կրծում է մատիտները, եղունգները:
- Արագ է հոգնում, հաճախ հիվանդանում է:
- Հաճույքով է մասնակցում բաց օդում,մարզադահլիճում կազմակերպվող միջոցառումներին:

Սոցիալական

- Ձգտում է լինել առաջինը:
- Մրցունակ է, խանդավառությամբ լի:
- Երբեմն պարտվելիս դրսևորում է պատշաճ վարքագիծ, անազնվություն, կանոններ է հորինում:

- Տեսանելի ջանքեր է գործադրում հաջողելու ուղղությամբ, բայց և ձգտում է ստուգել հաստատված սահմանագծերը:
- Կարոտ է խրախուսման, ցանկացած անհաջողություն ցավագին է ընկալում:
- Ձվարճանալու պատրաստակամությունն անսպառ է, սիրում է անակնկալներ:
- Կարող է դրսևորել մեծամտություն, հաճախ ծաղրում և քննադատում է մյուսներին:
- Հեշտությամբ ընկճվում է, երբ վիրավորում են:
- Մեծ տեղ է տալիս ընկերներին (կարող է ունենալ սեփական ընկեր):
- Իր միջավայրային կարևորությամբ, դպրոցը գալիս է փոխարինելու տան ազդեցությունը:

Լեզվական

- Սիրում է աշխատել:
- Սիրում է ամեն ինչ բացատրել:
- Սիրում է կատակներ և հանելուկներ:
- Գործածում է պարծենկոտ ու խանդավառ լեզվաոճ:
- Անընդհատ գանգատվում է:

Ճանաչողական

- Սիրում է հարցեր տալ:
- Սիրում է նոր խաղեր:
- Սիրում է ներկել, նկարել:
- Ամենից լավ յուրացնում է նյութը հայտնագործությունների, փորձի միջոցով:
- Նախընտրում է ընթացքը, այլ ոչ՝ արդյունքը:
- Փորձում է անել ավելին, քան կարող է ավարտել:
- Դերային խաղն ավելի բարդանում է:
- Խմբային խաղն ավելի հաջող է ստացվում:
- Սկսում է հսկանալ «անցյալ» հասկացությունը, երբ այն սերտորեն կապակցվում է «ներկային»:
- Սկսում է հետաքրքրություն ցուցաբերել բուն հմտության և մեթոդների նկատմամբ:

3.Պատրաստվածությունը դպրոցական ուսումնառությանը

Վեց տարեկանում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, թե երեխան պատրա՞ստ է արդյոք դպրոցական կյանքի և ուսումնառության համար:

Դպրոցական ուսումնառությանը պատրաստ լինել չի նշանակում միայն գրել-կարդալ, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կողմերը՝ սկսած ֆիզիկական զարգացումից մինչև հատուկ գիտելիքների և կարողությունների առկայությունը:

Առանձնացվում են դպրոցին պատրաստվածության հիմնախնդիրների չորս խումբ՝

-սոցիալական

-ֆիզիկական

-հուզակամային

-իմացական

Սոցիալական պատրաստվածությունն իր մեջ է ներառում է երեխայի՝ հասակակիցների հետ շփվելու, իր վարքը խմբի կանոններին ենթարկելու, աշակերտի դերը կատարելու պահանջը:

Ֆիզիկական ոլորտն ընդհանուր առողջությունն է: Ընդհանուր ֆիզիկական զարգացումը կանոնավոր քաշն է, հասակը, մկանային տոնուսը, և այլն, որոնք համապատասխանում են 6-7 տարեկան տղաների և աղջիկների ֆիզիկական զարգացածության պահանջներին: Տեսողության, լսողության, մատների նրբաշարժումների (մոտորիկայի) զարգացածության աստիճանը: Երեխայի նյարդային համակարգի վիճակը՝ գրգռվածության և հավասարակշռվածության աստիճանը: Ընդհանուր առողջական վիճակը: Ֆիզիկական ոլորտի պատրաստվածությունը նշանակում է շարժումների ճշգրտություն, ձեռքի վարժվածություն մանր շարժումներ կատարելուն, աչքի և ձեռքի շարժման համաձայնեցվածություն, գրիչ, մատիտ բռնելու և դրանք գործածելու կարողություն:

Հուզականային ոլորտը. անմիջական ցանկությունները սեփական կամքին ենթարկելու կարողությունն է: Երեխայի համար դժվար է հարմարվել դպրոցական կյանքին, եթե նա չի կարող տիրապետել և ղեկավարել սեփական անձը: Նա պետք է ժամանակին դպրոց գա, որոշակի ժամանակահատվածում դասարանում նստի, առաջադրանքները կատարի:

Իմացական ոլորտն իր մեջ ներառում է հետևյալ գործընթացները՝ **ուշադրություն, հիշողություն, երևակայություն, մտածողություն, ինչպես նաև ձեռքի մանր մոտորի-կայի** կամ նրբաշարժումների զարգացածության աստիճանը: Ձեռքի մանր մոտորի-կայի զարգացածությունը նպաստում է խոսքի զարգացմանը, քանի որ խոսքի կենտ-րոնը և այն կենտրոնը, որը պատասխանատու է մատների շարժումների կոորդի-նացիայի համար, գլխուղեղում գտնվում են իրար կից և փոխազդում են միմյանց վրա: Նկարչությունը, ապլիկացիան, գրաֆիկական վարժությունները կնախապատ-րաստեն նախադպրոցականներին գրելու հմտությանը: Նախադպրոցական տարիքի ավարտին երեխայի ձեռքը գրելուն պատրաստ է լինում:

Նշված գործընթացները պահանջում են առանձնահատուկ ուշադրություն, քանի որ այս տարիքում դրանք առավելապես ենթակա են զարգացման և կատարելագործման, և դրանց զարգացածության աստիճանից մեծապես կախված է ապագայում երեխայի հարմարված, հոգեբանորեն հասուն և հաջողակ լինելը: Ըստ Լ. Վիգոտսկու՝ ինտելեկտուալ պատրաստվածությունը երեխայի ինտելեկտուալ գործընթացների զարգացման մակարդակն է, առաջին հերթին, առարկաներն և երևույթները համապատասխան խմբերում ընդհանրացնելու և տարբերակելու, ապա բառերով արտահայտելու ունակությունն է:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ոչ բոլոր երեխաներն են նախադպրոցական տարիքի ավարտին պատրաստ լինում դպրոցին կամ ուսումնառության նկատմամբ համապատասխան դրդապատճառ (մոտիվացիա) ունենում: Սա հանգեցնում է այն բանին, որ երեխան հետ է մնում իր հասակակիցներից, դժվարանում է կատարել ուսուցչի և ծնողների՝ աստիճանաբար բարդացող պահանջները: Որպես հետևանք՝ առաջ են գալիս հոգեբանական մի շարք հիմնախնդիրներ. երեխան դժկամությամբ է գնում կամ ընդհանրապես հրաժարվում է դպրոց գնալուց և այլն:

Ինչպես իմանալ, արդյոք երեխան լիովին պատրաստ է դպրոցին:

Պատահում է, որ 6-7 տարեկան մի տղա կամ աղջիկ արդեն տիրապետում է կարդալուն, գրելուն և հաշվելուն:Սա, իհարկե, հաճելի է ծնողներին, և նրանցից ոմանք կարծում են, որ այս «հիմքը» բավարար է առաջին դասարան ընդունվելու համար: Սակայն, բացի դրանից, չափազանց կարևոր է, որ երեխան պատրաստ լինի դպրոցին և' բարոյապես, և' հոգեբանորեն: Սովորելն ու դասարանում լինելը միայն նոր գիտելիքներ ձեռք բերելը չէ: Սա, իհարկե, թիմում վարվելու և անհրաժեշտ կանոններին ենթարկվելու կարողությունն է: Նախքան դպրոց մտնելը երեխաները պետք է համառություն սովորեն. Չէ՞ որ նրանցից սպասվում են առնվազն կես ժամ տևողությամբ դասեր: Բնականաբար, երեխան, ով չգիտի փոխել հագուստը և փոխել կոշիկը, կամ դա անում է «ձեռքից» և ծնողների հսկողության ներքո, կարող է լուրջ դժվարությունների հանդիպել դպրոցում: Բացի այդ, ապագա առաջին դասարանցին պետք է հնարավորություն ունենա նավարկելու տարածության մեջ ՝ ժամացույցով հասկանալու ժամանակը:

Երեխայի ֆիզիոլոգիական պատրաստվածությունը դպրոցին.

Այս ասպեկտը նշանակում է, որ երեխան պետք է ֆիզիկապես պատրաստ լինի դպրոցին: Այսինքն՝ նրա առողջական վիճակը պետք է թույլ տա նրան բարեհաջող անցնել կրթական ծրագիր. Ֆիզիոլոգիական պատրաստվածությունը ենթադրում է նուրբ շարժիչ հմտությունների (մատների) զարգացում, շարժումների համակարգում: Երեխան պետք է իմանա, թե որ ձեռքում և ինչպես բռնել գրիչը: Եվ նաև, երբ երեխան առաջին դասարան է մտնում, նա պետք է իմանա, դիտարկի և հասկանա հիգիենայի տարրական նորմերի պահպանման կարևորությունը՝ սեղանի շուրջ ճիշտ կեցվածքը և այլն:

Երեխայի հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին.

Հոգեբանական ասպեկտը ներառում է երեք բաղադրիչ՝ ինտելեկտուալ պատրաստվածություն, անձնական և սոցիալական, հուզական-կամային:

1. Դպրոցին ինտելեկտուալ պատրաստվածությունը նշանակում է.

Մինչև առաջին դասարան երեխան պետք է ունենա որոշակի գիտելիքների պաշար

Ենթադրվում է, որ նա պետք է նավարկի տիեզերքում, այսինքն՝ իմանա, թե ինչպես հասնել դպրոց և վերադառնալ և այլն

Երեխան պետք է ձգտի ձեռք բերել նոր գիտելիքներ, այսինքն՝ լինի հետաքրքրասեր.

Հիշողության, խոսքի, մտածողության զարգացումը պետք է համապատասխանի տարիքին:

2. Անձնական և սոցիալական պատրաստվածությունը ենթադրում է հետևյալը.

Երեխան պետք է լինի շփվող, այսինքն՝ կարողանա շփվել հասակակիցների և մեծահասակների հետ. Հաղորդակցության մեջ չպետք է դրսևորվի ագրեսիա, իսկ մեկ այլ երեխայի հետ վիճաբանության ժամանակ նա պետք է կարողանա գնահահատել և ելք փնտրել դրանից, երեխան պետք է հասկանա և ճանաչի մեծահասակների հեղինակությունը.

Հանդուրժողականություն՝ սա նշանակում է, որ երեխան պետք է համարժեք արձագանքի մեծահասակների և հասակակիցների կառուցողական մեկնա-բանություններին.

Բարոյական զարգացում, երեխան պետք է հասկանա, թե ինչն է լավ, ինչը՝ վատ;

Երեխան պետք է ընդունի ուսուցչի առաջադրած խնդիրը՝ ուշադիր լսելով, պարզաբանելով անհասկանալի կետերը, իսկ այն ավարտելուց հետո համարժեք գնահատի իր աշխատանքը, ընդունի իր սխալները, եթե այդպիսիք կան:

3. Երեխայի էմոցիոնալ-կամային պատրաստվածությունը դպրոցին ներառում է.

Երեխան պետք է հասկանա, թե ինչու է նա դպրոց հաճախում, կարևորի սովորելը.

Ունենա սովորելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու հետաքրքրություն.

Երեխան կարողանա կատարելու այնպիսի առաջադրանք, որը նրան այնքան էլ դուր չի գալիս, բայց դա պահանջվում է ուսումնական պլանով.

Հաստատակամությունը չափահասին որոշակի ժամանակ ուշադիր լսելու և առաջադրանքներն ավարտին հասցնելու ունակություն է՝ առանց օտար առար-կաների և գործերի ուշադրությունը շեղվելու:

Երեխայի ճանաչողական պատրաստվածությունը դպրոցին.

Այս ասպեկտը նշանակում է, որ ապագա առաջին դասարանցին պետք է ունենա որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ կլինեն հաջող դպրոցական կրթության համար: Այսպիսով, ի՞նչ պետք է իմանա և կարողանա վեց տարեկան երեխան:

1) Ուշադրություն.

Առանց շեղելու ինչ-որ բան անի քսանից երեսուն րոպե:

Գտնի նմանություններ և տարբերություններ առարկաների, նկարների միջև:

Որպեսզի կարողանա կատարել աշխատանքը ըստ մոդելի, օրինակ, ճշգրիտ կերպով վերարտադրեք նախշը ձեր թղթի վրա, պատճենեք մարդու շարժումները և այլն:

Հեշտ է խաղալ խոհեմության խաղեր, որտեղ արագ արձագանք է պահանջվում: Օրինակ, զանգահարեքասել որևէ կենդանի էակ, բայց խաղից առաջ քննարկեք կանոնները. եթե երեխան լսում է ընտանի կենդանուն, ապա նա պետք է ծափահարի իր ձեռքերը, եթե դա վայրի է, թակեք ոտքերը, եթե թռչուն է, թափահարեք ձեռքերը:

2) մաթեմատիկա.

0-ից 10 թվեր.

Հաշվեք վերև 1-ից մինչև 10-ը և հետհաշվեք 10-ից 1-ը:

Թվաբանական նշաններ՝ «+», «-», «=»:

Շրջանակ, քառակուսի, կիսել չորս մասի:

Կողմնորոշումը տարածության մեջ և թղթի վրա՝ «աջ, ձախ, վերև, ներքև, վերև, ներքև, հետևում» և այլն:

3) հիշողություն.

10-12 նկարի անգիր սովորում:

Հիշողությամբ ոտանավորներ, ասացվածքներ, հեքիաթներ և այլն պատմելը:

Տեքստի վերապատմում 4-5 նախադասությունից:

4) մտածողություն.

Ավարտել նախադասությունը, օրինակ՝ «Գետը լայն է, բայց առուն…», «Ապուրը տաք է, բայց կոմպոտը…» և այլն:

Բառերի խմբից գտնել հավելյալ բառ, օրինակ՝ «սեղան, աթոռ, մահճակալ, կոշիկներ, բազկաթոռ», «աղվես, արջ, գայլ, շուն, նապաստակ» և այլն:

Որոշել իրադարձությունների հաջորդականությունը, այնպես որ նախ և ինչը՝ հետո:

Գտնել գծանկարների, չափածո-գեղարվեստական գրականության անհամապատասխանությունները:

Փազլների հավաքում առանց մեծահասակների օգնության:

Թղթից ծալել մեծահասակի հետ միասին՝ պարզ առարկա՝ նավակ, նավակ:

5) Նուրբ շարժիչ հմտություններ.

Ճիշտ է գրիչ, մատիտ, վրձին պահել ձեռքում և կարգավորել դրանց ճնշման ուժը գրելիս և նկարելիս:

Գունավորել առարկաները և ներկել դրանք առանց ուրվագծից այն կողմ դուրս գալու:

Մկրատով կտրել թղթի վրա գծված գծի երկայնքով:

6) խոսք.

Մի քանի բառից կազմել նախադասություններ, օրինակ՝ կատու, բակ, գնալ, արևի ճառագայթ, խաղալ:

Հասկանալ և բացատրել ասացվածքների իմաստը:

Կազմել համահունչ պատմություն՝ հիմնվելով նկարի և նկարների շարքի վրա:

Արտահայտիչ, ճիշտ ինտոնացիայով արտասանել բանաստեղծություններ.

Բառերի մեջ տարբերել տառերն ու հնչյունները:

7) շրջակա աշխարհը.

Իմանա հիմնական գույները, ընտանի և վայրի կենդանիները, թռչունները, ծառերը, սունկը, ծաղիկները, բանջարեղենը, մրգերը և այլն:

Անվանի եղանակները, բնական երևույթները, չվող և ձմեռող թռչունները, ամսվա ամիսները, շաբաթվա օրերը, ազգանունը, անունն ու հայրանունը, ծնողների անուններն ու նրանց աշխատավայրը, քաղաքը, հասցեն, ինչ մասնագիտություններ ունեն:

Երեխային դպրոցին պատրաստելու ցուցակ

Ահա մի ամբողջ ցուցակ, թե ինչ պետք է իմանա և կարողանա անել ապագա առաջին դասարանցին.

- ✓ Վստահորեն նշի իր ազգանունը, անունը և հայրանունը
- ✓ Ծննդյան ամսաթիվը
- ✓ Տան հասցեն
- ✓ Մոր և հայրիկի անունը (տատիկ-պապիկ և այլ հարազատներ `պարտադիր)
- ✓ Ծնողների աշխատանքի վայրը
- ✓ Երկրում հայտնի բանաստեղծներ և գրողներ
- ✓ Արձակուրդներ
- ✓ Տարբերակել հասկացությունների միջև. «Առաջ - հետ», «աջ - ձախ»
- ✓ Շաբաթվա օրերը
- ✓ Գույներ և երանգներ
- ✓ Տարվա եղանակներ (ամիսներով)
- ✓ Երթևեկության կանոններ
- ✓ Տարբերակել տնային և վայրի կենդանիներ, անվանել նրանց ձագերին
- ✓ Տարբերակել այգի, անտառ, վայրի ծաղիկներ
- ✓ Տարբերակել չվող և ձմեռող թռչուններ
- ✓ Տարբերակել մրգերը բանջարեղենից
- ✓ Իմանալ մասնագիտություններ
- ✓ Անվանել տրանսպորտի տեսակները
- ✓ Պատմել
- ✓ Պատասխանել հարցերին
- ✓ Անգիր արտասանել հատվածներ

- ✓ Գտնել լրացուցիչ առարկա, նկար, բառ, տառ
- ✓ Լուծել հանելուկներ
- ✓ Հաշվել 0-ից 10-ը և հակառակը
- ✓ Իմանալ թվերի կազմը
- ✓ Տարբերակել «ավելին», «պակաս» հասկացությունները
- ✓ Իմանալ տառերը, տարբերել դրանք հնչյուններից
- ✓ Սահմանել առաջին և վերջին տառը (ձայնը)
- ✓ Գրիչը պահել

Չնայած այն հանգամանքին, որ թվարկված հմտություններից շատերը, որոնք երեխան պետք է սովորի տարրական դպրոցում, առաջին դասարան մտնելուց առաջ թեստավորումն իրականացվում է հենց այս կետերի վրա:

Ստորև ներկայացնում եմ մի քանի հոգեբանական թեստեր, որոնցով կարող են ստուգվել երեխայի պատրաստվածությունը դպրոցին:

Հետազոտություններն իրականացրել եմ հարազատ գյուղի նախակրթարանում, արդյունքները ներկայացված են աղյուսակներով (տես ներդիրը) :

Թեստ 1. Մոտիվացիոն պատրաստվածություն: Պատասխանել հարցերին.

1.Դուք ինքներդ ուզո՞ւմ եք դպրոց գնալ: Ինչու:

2.Ինչպե՞ս պատրաստվել դպրոցին:

3.Ինչո՞ւ եք կարծում,թե հետաքրքիր կլինի դպրոցում:

4.Ինչո՞ւ են դպրոցում անհրաժեշտ պայուսակը, զանգը, ցերեկույթները:

5.Ցանկանո՞ւմ եք մնալ մանկապարտեզում, տանը:

6.Ի՞նչ ցկանկանայիք,որ ձեզ սովորեցնեն դպրոցում:

7.Ո՞ր դպրոցում կցանկանայիր սովորել. Այնտեղ, որտեղ գրում են , կարդում, սովորում, թե այնտեղ, որտեղ խաղում են, երգում, պարում:

Գնահատում՝ 1 միավոր դրական պատասխանի համար, 0.5 միավոր խաղային պատասխանի համար, 0 միավոր՝ չգիտեմ: Արդյունքները՝ 6-7 միավոր ՝ ունի բարձր

մոտիվացիա, 4-5 միավոր՝ միջին մոտիվացիա, 2-3 միավոր՝ ցածր: (**Տես ներդիր աղյուսակ 1):**

Թեստ 2.Պատասխանել հարցերին:

1.Ուզո՞ւմ ես դպրոց գնալ.

ա) այո, շատ

բ) վստահ չեմ, չգիտեմ, կասկածում եմ

գ) ոչ, ես չեմ ուզում

2.Ինչո՞ւ ես ուզում դպրոց գնալ, ինչն է քեզ հետաքրքրում այնտեղ.

ա) ուզում եմ նոր բաներ սովորել

բ) ուզում եմ, որ նոր գրքեր, տետրեր, պայուսակ, համազգեստ գնեն

գ) դպրոցում զվարճալի է, նոր ընկերներ կունենամ, հոգնել եմ մանկապարտեզից

3.Ինչպե՞ս ես պատրաստվում դպրոցին.

ա) սովորում եմ տառեր, թվեր, կարդալ, գրել

բ) նկարում եմ, խաղում, քանդակում պլաստիլինով

գ) ծնողներս գնել են նոր համազգեստ, պայուսակ, դպրոցական պարագաներ

4.Ի՞նչը կսիրեիր դպրոցում.

ա) դասերը

բ) փոփոխությունները (այն ամենը, ինչը կապված չէ ուսուցման հետ)

գ) ֆիզկուլտուրան կամ նկարչության դասը

5.Եթե դպրոց կամ մանկապարտեղ չգնայիր, ի՞նչ կանեիր տանը.

ա) կգրեի, կկարդայի, կլուծեի օրինակներ

բ) կխաղայի կոնստրուկտորով

գ) կխնամեի կենդանիներին, կօգնեի մայրիկին

Գնահատում՝ ա) 2 միավոր, բ) 1 միավոր, գ) 0 միավոր: Արդյունքները՝ 0-4 միավոր երեխան չի գիտակցում, որ դպրոց է գնալու, 5-8՝ առկա է մակերեսային հետաքրքրքրվածություն, 9-10 միավոր՝ վերաբերմունքը դրական է, պատրաստ է դպրոցին: (**Տես ներդիր աղյուսակ 2**):

Թեստ 3. Ս. Ա. Բանկովի թեստային զրույցը.

1.Ասեք ձեր անունը, ազգանունը, հայրանունը:

2.Ասեք մայրիկի, պապիկի, տատիկի անունները:

3.Դուք աղջիկ եք, թե տղա: Ո՞վ եք լինելու, երբ մեծանաք՝ մորաքույր, թե քեռի:

4.Քույր կամ եղբայր ունես: Ո՞վ է ավելի մեծ:

5.Քանի՞ տարեկան ես: Քանի՞ տարեկան կլինես մեկ տարի հետո, երկու տարի հետո:

6.Հիմա առավոտ է, թե երեկո:

7.Ե՞րբ ենք նախաճաշում՝ առավոտյան, թե երեկոյան, ե՞րբ ենք ճաշում՝ առավոտյան, թե ցերեկը:

8.Ի՞նչ է լինում նախքան ճաշը կամ ընթրիքը:

9.Որտեղ ես ապրում: Ասա քո հասցեն:

10.Տանն ո՞վ է աշխատում:

11.Քեզ դուր գալիս է նկարելը: Ի՞նչ գույնի է տվյալ առարկան:

12.Որո՞նք են տարվա եղանակները:

13.Ե՞րբ կարող ես սահնակով սղալ՝ ձմռանը, թե ամռանը:

14.Ինչո՞ւ է ձյունը ձմռանը, ոչ թե ամռանը:

15.Ի՞նչ է անում բժիշկը, ուսուցիչը, խոհարարը:

16.Ինչո՞ւ ենք ցերեկույթներ անում:

17.Ցանկանո՞ւմ ես դպրոց գնալ:

18.Ցույց տուր քո աջ աչքը, ձախականջը: Ինչո՞ւ են դրանք հարկավոր:

19.Ի՞նչ կենդանիներ գիտես:

20.Ի՞նչ թռչուններ գիտես:

21.Ի՞նչն ավելի շատ ոտքեր ունի շունը, թե աքաղաղը:

22.Ո՞րն է ավելի շատ՝ 8-ը, թե 5-ը, 7-ը, թե 3-ը: Հաշվեք 3-ից 8, 9-ից՝ 2:

23.Ի՞նչ պետք է անես, եթե անտեղի ուրիշի իրը կոտրել ես:

Գնահատում՝ Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր, թերի պատասխան՝ 0.5 միավոր, չգիտեմ՝ 0 միավոր, հարց 5-3միավոր, հարց 9 -2միավոր, հարց15-3 միավոր, հարց 22 -2 միավոր: Արդյունքները՝ 15-20 միավոր՝ հոգեբանական հասունության ցածր մակարդակ, 21-24 միավոր՝ միջին հասունություն, 25-29 միավորի դեպքում երեխան համարվում է դպրոցին պատրաստ: (**Տես ներդիր աղյուսակ 3**):

Հետազոտությունները ցույց տվեցին, որ երեխաները հիմնականում մոտիվացված են դպրոց հաճախելուն, մի քանիսն էլ չի գիտակցում, թե ինչու է դպրոց գնում,իսկ զրույցից էլ պարզ դարձավ, որ նրանք արդեն պատրաստ են գնալու դպրոց:

4.Վեց տարեկան երեխաները դպրոցում

Մի դատապարտեք ձեր երեխաներին ձեր սեփական իմացության կաղապարների մեջ տեղավորվելուն, քանզի նրանք այլ ժամանակի ծնունդ են:

Հրեական ասացվածք

Ուսուցիչներին և ծնողներին քաջ հայտնի է, թե երեխան ինչպիսի դժվարությունների է հանդիպում դպրոց հաճախելիս: Դա հասկանալի է, քանի որ երեխայի կյանքում մեծ փոփոխություններ են տեղի ունենում:Փոխվում են նրա ապրելաձևը, հիմնական գործունեությունը, փոխվում են նաև մեծերի կողմից նրան ներկայացվող պահանջները: Ուսուցումը դպրոցում պահանջում է մտավոր լարվածություն, կամային ջանքեր, բարձր աշխատունակություն: Այդ ամենը դժվար է ու հոգնեցնող վեց տարեկան

երեխայի համար և երբեմն դպրոցի նկատմամբ առաջանում է բացասական վերաբերմունք ու հույզեր:Դրա հավանականությունն ավելի մեծ է, եթե երեխան պատրաստ չէ դպրոցական ուսուցմանը, և եթե մեծահասակները չեն օգնում նրան ուսուցման սկզբնական շրջանում հաղթահարել նրա առջև ծառացող դժվարությունները:

Առանձնակի ուշադրության է արժանի նաև վեց տարեկան առաջին դասարանցիների համար բարենպաստ միջավայրի ստեղծման խնդիրը: Քանի որ երեխան դպրոց է գալիս ազատ միջավայրից, ուր նրան ներհատուկ են խաղն ու զվարճալիքները, դպրոցում դեռ երկար ժամանակ դրանց համար համապատասխան միջավայր, կահավորում է անհրաժեշտ:

Վեց տարեկան երեխան դասասենյակում

Տեսողության և մանր շարժողական մկանների զարգացում

- Երեխաներին չպետք է հանձնարարել գրատախտակից արտագրելու հետ կապված մեծ աշխատանքներ. Նրանք, հարկ եղած դեպքում, հաղթահարում են առաջադրանքը, սակայն զգալի դժվարությամբ:
- Դժվարացած է բացթողումների ապահովումը և տողի վրա մնալը:
- Աչքերով հետևելու կարողությունն այժմ ընթերցանական վարժությունները կառավարելի է դարձնում:

Խոշոր շարժողական մկաններ

- Հարկ է հանդուրժել գործնական աղմուկի և աշխույժության մակարդակը. Երեխաները հաճախ աշխատում են կանգնած վիճակում:
- Ուսուցիչները պետք է փորձեն նրբանկատորեն դանդաղեցնել երեխաների գործողությունների ընթացքը կամ սահմանափակեն տրված առաջադրանքը՝ որակի ապահովման նպատակով:
- Ճանաչողական հմտությունների աճ
- Բոլոր տեսակի խաղերն են օգտակար և սիրելի, հանելուկները, բանաստեղծությունները և երգերը հիացմունք ու պայծառություն են առաջացնում, խաղերի միջոցով իրականացվող ուսուցումն ավելի ամուր ուսումնական հմտություններ է կազմավորում, քան դասագրքայինը:

- Առկա է ստեղծագործելու բուռն ցանկություն:Երեխաների գործադրած ջանքերը հարկ է լինում մշտապես գնահատել, նրանց համար կարևոր է գիտակցել, որ չկա սխալի և ճշտի սահմանազատումներ արվեստի գործերի նկատմամբ:
- Ստացված արդյունքը քանակական առումով բարձր է, սակայն որակի և ավարտունության առումով՝ ցածր: Երեխաները հպարտանում են ստացված արդյունքի քանակով, նրանց չի մտահոգում դրանց որակն ու տեսքը:
- Ուշադրություն դարձնենք այն հրճվանքին, որով երեխաներն ընկղմվում են բուն գործելու մեջ. իրենց հաճույքի համար: Սա վերաբերվում է թե' դասերին, թե' նախաճաշին, թե' մաքրություն անելուն:
- Հասարակագիտական առարկաները պետք է առնչվեն ներկային:Շատ օգտակար ու հաճելի են էքսկուրսիաներն ու արշավները, երբ դրանց հաջորդում են համապատասխան գործողություններ՝ փորձին վերաբերող պատմություններ, տեսածի վերարտադրում, երեխաները սկսում են ըմբռնել անցյալում կատարված իրադարձությունները միայն ներկայի հետ դրանք կապակցելու շնորհիվ:

Սոցիալական վարք

- Ծայրահեղ վարքագիծը հարկ է ըմբռնել, սակայն և փորձել կառավարելի դարձնել. անհաշտությունը, ծաղրանքը, մեծամտությունը, անվերջ գանգատվելը, աղմկելը այն միջոցներն են, որոնց գործադրմամբ վեց տարեկանները փորձում են մեծահասակների հետ իրենց փոխհարաբերությունները:
- Երեխաները չափազանց զգայուն են: Մի փոքր խրախուսանք կամ գովեստի խոսք՝ կարող են օգնել նրանց՝ հաղթահարել դժվարագույն առաջադրանքը, և հակառակը՝ խիստ քննադատությունը կարող է իսկապես վնասել:
- Ուսուցման համար կազմակերպվող խաղերից պետք է հանվի մրցակցության տարրը, վեց տարեկան երեխաները հակված են մրցակցության և առաջինը լինելու նրանց ձգտումը կարող է անցնել տրամաբանական սահմանները:

Երբ արդեն հասկանալի էր, որ վեց տարեկան երեխան պատրաստ է դպրոց գնալուն, հարց առաջացավ, թե մենք՝ ուսուցիչներս, որքանով ենք պատրաստ ընդունելու վեց

տարեկաններին: Հարցախույզն իրականացրել եմ վերապատրաստման մասնակիցների միջև: Հարցաշարում ընդգրկված էին 5 հարց.

1.Երեխաները պետք է դպրոց հաճախեն ` ա) 6 տարեկանից, բ) 7 տարեկանից

2.Երեխաները պատրաստ են դպրոց գնալ 6 տարեկանից՝ ա) այո, բ) ոչ

3. Ձեր կարծիքով դպրոցին պատրաստվածությունը որոշվում է՝

ա) ֆիզիկական պատրաստվածությամբ, բ) սոցիալական պատրաստվածությամբ, գ) հուզակամային պատրաստվածությամբ, դ) իմացական պատրաստվածությամբ, ե) այլ տարբերակ

4. Որպեսզի երեխան պատրաստ լինի դպրոցին, պետք է դպրոց հաճախի՝

ա) տնից, բ) մանկապարտեզից, գ) նախակրթարանից, դ) զարգացման կենտրոններից, ե) այլ տարբերակ

5. Երեխայի պատրաստվածությունը ստուգելու համար իրականցնում եմ՝ ազատ շարադրանք:

Արդյունքներն այսպիսին էին. (Տես ներդիր աղյուսակ 4):

5.Առաջին դասարանցիները և ընտանիքը

Ուսուցման առաջին տարին հաճախ որոշում է երեխայի դպրոցական կյանքի հետագա ընթացքը: Այս շրջանում դպրոցականը մեծահասակների ղեկավարությամբ կատարում է իր զարգացման գործընթացի չափազանց կարևոր քայլերը: Այդ ճանապարհին շատ բան պայմանավորվում է առաջին դասարանցու ծնողների վարքով:

Առաջին դասարանցիների ծնողների հուշաթերթիկ

- Սատարեք երեխայի ՝ աշակերտ դառնալու ձգտումը: Երեխայի դպրոցական գործունեության հանդեպ ձեր անկեղծ հետաքրքրությունը, լուրջ մոտեցումը առաջին հաջողություններին և դժվարություններին նրան կօգնեն հաստատելու իր նոր վիճակի և գործունեության նշանակալիությունը:
- Երեխայի հետ քննարկեք այն կանոնները և նորմերը, որոնց նա առնչվում է դպրոցում: Բացատրեք դրանց անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը:
- Ձեր երեխան դպրոց է եկել ուսանելու: Սովորելիս ամեն ինչ չէ, որ միանգամից է ստացվում: Երեխան ունի սխալվելու իրավունք:
- Առաջին դասարանցու հետ միասին կազմեք օրվա կանոնակարգը, հետևեք, որպեսզի այն պահպանվի:
- Մի անտեսեք այն դժվարությունները, որոնց երեխան կարող է բախվել սովորելու սկզբնական շրջանում:
- Խրախուսեք երեխայի՝ հաջողության հասնելու ձգտումը: Ցանկացած աշխատանքում անպայմանորեն գտեք որևէ բան, որի համար կարելի է երեխային գովաբանել:
- Հիշեցեք, որ գովեստները և հուզական սատարումը կարող են ակնհայտորեն բարձրացնել երեխայի մտավոր նվաճումները:
- Եթե երեխայի վարքի կամ գործունեության մեջ ինչ-որ բան ձեզ անհանգստացնում է, ապա մի խուսափեք խորհրդակցել ուսուցչի կամ հոգեբանի հետ:
- Դպրոց հաճախելուն զուգընթաց ձեր երեխայի կյանքում հայտնվել է առավել հեղինակավոր անձնավորություն՝ ուսուցիչը: Հարգեք ձեր երեխայի կարծիքը իր ուսուցչի մասին:
- Ուսումնառությունը դժվար և պատասխանատու աշխատանք է:Դպրոց ընդունելը կտրականապես ոխում է երեխայի կյանքը:Սակայն դա չպետք է նրան զրկի կյանքի բազմազանությունից, խաղից: Առաջին դասարանցու առօրյայում պետք է բավական ժամանակ հատկացված լինի խաղերին:

Եզրակացություն

Դպրոցին պատրաստվածությունը բարդ կրթություն է, որը պահանջում է բազմակողմ համակարգային հոգեբանական հետազոտություն: Կարևոր է հասկանալ, որ 6 տարեկան երեխան չի պահանջում արագ գրել և կարդալ, դա ժամանակի հետ է գալու: Բայց լավ հիշողությունը, վառ երեւակայությունը, վերլուծական հմտությունները և լավ զարգացած նուրբ շարժիչ հմտությունները կօգնեն արագացնել այս գործընթացը:Յուրաքանչյուր երեխայի զարգացումը կախված է նրա անհատական առանձնահատկություններից, բայց կան որոշակի չափանիշներ, որոնց վրա պետք է կենտրոնանալ՝ կրթության հնարավոր բացերը աստիճանաբար լրացնելու համար: **Հարկավոր է** կատարել երեխայի անհատականության դիմանկարը՝ դիտարկելով նրա պահվածքը.

- հասարակական վայրերում և տանը;
- օտարների և հարազատների հետ զրուցելիս.
- ընկերների հետ հարաբերություններում և նրանց հետ ամենօրյա շփումներում:

Պատրաստ լինել դպրոցին չի նշանակում կարդալ, գրել և հաշվել կարողանալ, դա նշանակում է պատրաստ լինել սովորել այս ամենին: Դպրոցական պատրաստվածությունը ներառում է հետևյալ պարամետրերը. **Հոգեբանական պատրաստակամություն** - մտքի վիճակ, նյարդային համակարգ, ուսուցման գործունեության մոտիվացիա, **Ինտելեկտուալ պատրաստակամություն** - երեխան ունի լայն հեռանկար, զարգացած ճանաչողական գործընթացներ. **զգացմունքային - կամային պատրաստակամություն** - հույզերը կառավարելու, արտաքին աշխարհի հետ հարաբերություններ կառուցելու ունակություն. **Ֆիզիկական պատրաստվածություն** - երեխայի առողջական վիճակը (որպես լրացուցիչ բաղադրիչ): Հաջող ուսուցման գործունեության հիմքի ստեղծման գործում կարևոր դեր է խաղում ճանաչողական գործընթացների զարգացումը `մտածողություն, հիշողություն, խոսք և, ոչ պակաս կարևոր, ընկալում, ուշադրություն, կատարում, ինչպես նաև հուզական-կամային ոլորտ և հաղորդակցման հմտություններ:

Երեխան, ով առաջին անգամ է գալիս դպրոց, չի կարող միանշանակ սահմանվել որպես **պատրաստ կամ անպատրաստ** աշակերտ: Գործնականում չկան երեխաներ,

որոնք բացարձակապես պատրաստ են կամ պատրաստ չեն դպրոցին: Յուրաքանչյուր երեխա յուրովի, բոլորովին տարբերվող մյուսներից, ընկալում է աշակերտի նոր սոցիալական դիրքը, յուրաքանչյուր երեխայի համար դպրոցական գործընթացը բոլորովին անծանոթ մի բան է: Մնում է խոսել միայն դպրոցական կյանքին կամ նրա համար սոցիալական նոր կարգավիճակի պատրաստակամության կամ անպատրաստության աստիճանի մասին:
Որպես դպրոցի համար նման անպատրաստության պատճառ կարելի է առանձնացնել երկու հիմնական խումբ.

Օրգանական պատճառներ, որոնք երեխայի ֆիզիկական և մտավոր զարգացման շեղումներ են

Կրթական պատճառները կապված են վաղ նախադպրոցական տարիքի երեխաներին մանկավարժական մոտեցման անարդյունավետ մարտավարության հետ:

Իրականում շատ ավելի շատ պատճառներ և գործոններ կարող են լինել, որոնք որոշում են երեխայի պատրաստվածությունը դպրոցին: Ավելին, այս գործոններից յուրաքանչյուրը, նույնիսկ առաջին հայացքից ամենաանշանը, կարող է ազդել երեխայի դպրոցին պատրաստվածության ընդհանուր աստիճանի վրա: Մանկավարժությունը որոշում է միայն այն հիմնական գործոնները, որոնք կարող են այս կամ այն չափով ազդել ուսումնական գործընթացի արդյունավետության վրա, բայց կան նաև գործոններ, որոնք գրեթե չեն արտացոլվում բուն ուսումնական գործընթացում, բայց ազդում են երեխայի ընդհանուր վիճակի, նրա անձի վրա - իրազեկում և ներքին զգացմունքներ: Այս առումով հաճախ են տարաձայնություններ լինում ուսուցիչների և ծնողների միջև, որոնցից յուրաքանչյուրը միակ ճիշտն է համարում իր տեսակետը: Երբեմն ուսուցիչների համար դժվար է հասկանալ երեխային, ով արտաքինից ոչ մի կերպ չի ցուցադրում իր զգացմունքները, և միայն ծնողները կարող են որոշակի վստահությամբ ասել, թե ինչ է նա զգում:

Օգտագործված գրականություն

1.«Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես

2.Սարգսյան Ա.-Երեխայի հոգեբանական պատրաստությունը դպրոցական ուսուցմանը

3.Հովհաննիսյան Ա. Դպրոցի շեմին «Օգնություն ծնողներին և մանկավարժներին»

4. Հոգեբանական թեստեր

5.Մարցինովսկայա Տ. Դ. – Մանկավարժություն և հոգեբանություն

6.Շարոխինա Վ. Լ. –Երեխաների հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին

7.Վիգոտսկի Լ. Ս. – Տարիքային հոգեբանություն

8.Երեխայակենտրոն դասասենյակներ ստեղծումը

9. https://bit.ly/3ImEU9W

Ներդիր

Աղյուսակ 1.

Աշակերտ / Հարցեր	Ա2.	Ա2.2	Ա2.3	Ա2.4	Ա2.5	Ա2.6	Ա2.7	Ա2.8	Ա2.9	Ա2.10
1.	1	1	1	1	1	1	1	1	1	1
2.	1	1	1	1	1	1	1	1	1	1
3.	1	1	1	1	1	1	1	1	1	1
4.	1	1	1	1	0.5	0	1	0.5	1	0
5.	1	1	1	1	1	0.5	0.5	1	1	0.5
6.	0.5	1	1	1	0.5	1	0.5	0	1	0.5
7.	1	1	1	1	1	0.5	0.5	0.5	1	0.5
միավորներ	6.5	7	7	7	6	5	5.5	5	7	4.5

Աղյուսակ 2.

Աշակերտ / Հարցեր	Ա2.	Ա2.2	Ա2.3	Ա2.4	Ա2.5	Ա2.6	Ա2.7	Ա2.8	Ա2.9	Ա2.10
1.	ա	ա	ա	ա	ա	ա	ա	բ	ա	գ
2.	բ	ա	ա	բ	բ	բ	բ	գ	ա	գ
3.	ա	ա	ա	բ	ա	բ	գ	գ	ա	բ
4.	բ	ա	ա	ա	բ	գ	գ	բ	ա	բ
5.	ա	բ	բ	բ	բ	բ	գ	բ	բ	գ
միավորներ	8	9	9	7	7	5	3	3	9	2

Աղյուսակ 3.

Աշակերտ / Հարցեր	Ա2.	Ա2.2	Ա2.3	Ա2.4	Ա2.5	Ա2.6	Ա2.7	Ա2.8	Ա2.9	Ա2.10
1.	1	1	1	1	1	1	1	1	1	1
2.	1	1	1	1	1	1	1	1	1	1
3.	1	1	1	1	1	1	1	1	1	1
4.	1	1	1	1	1	1	1	1	1	1
5.	2	3	3	2	3	2	2	1	3	1
6.	1	1	1	1	1	1	1	1	1	1
7.	1	1	1	1	1	1	1	1	1	1
8.	1	1	1	1	1	1	1	1	1	1
9.	1	1	1	1	1	1	1	1	1	1
10.	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	0
11.	1	1	1	1	1	1	1	1	1	1
12.	1	1	1	1	1	1	0.5	0.5	1	0.5
13.	1	1	1	1	1	1	1	1	1	1
14.	1	1	1	1	1	1	1	1	1	1
15.	3	3	3	3	3	3	3	2	3	2
16.	0.5	0.5	1	0.5	0.5	0.5	0	0.5	1	0
17.	1	1	1	1	1	1	1	1	1	1
18.	1	1	1	1	1	1	1	1	1	1
19.	1	1	1	1	1	1	1	1	1	1
20.	1	1	1	1	1	1	1	1	1	1
21.	1	1	1	1	1	1	1	1	1	1
22.	2	2	1	1	0.5	0.5	0.5	1	2	0.5
23.	1	1	1	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	0.5
միավորներ	26	27.5	26	24.5	25	24	23	22	28	20.5

Աղյուսակ 4.

Отметка времени	1.Երեխաները պետք է դ	2. Ըստ Ձեզ՝ երեխաներ	3. Ձեր կարծիքով երեխ	4. Որպեսզի երեխան ա	5. Երեխայի պատրաստվածությունը ստուգելու համար իրականացնում եմ՝
11.07.2022 16:11:49	7 տարեկանից	Ոչ	դ) իմացական պատրա	նախակրթարանից	Գիտելիքների ստուգում
11.07.2022 16:14:11	7 տարեկանից	Ոչ	դ) իմացական պատրա	նախակրթարանից	Թեթև հարցում իմացության մակարդակը
11.07.2022 16:16:08	7 տարեկանից	Ոչ	ա) ֆիզիկական պատրա	նախակրթարանից	Փոքրիկ հարցազրույց:
11.07.2022 16:18:27	6 տարեկանից	Այո	դ) իմացական պատրա	նախակրթարանից	Ստուգողական աշխատանքներ
11.07.2022 16:19:57	6 տարեկանից	Այո	դ) իմացական պատրա	նախակրթարանից	Կարողությունների և հմտությունների ստուգում
11.07.2022 16:20:25	7 տարեկանից	Ոչ	ա) ֆիզիկական պատրա	զարգացման կենտրոնն	Զրույց երեխայի հետ
11.07.2022 16:21:34	6 տարեկանից	Ոչ	գ) հուզակամային պատ	նախակրթարանից	Իրականացնում եմ իմացական պատրաստվածության ստուգում:
11.07.2022 16:24:23	7 տարեկանից	Ոչ	գ) հուզակամային պատ	նախակրթարանից	Թեստային բանավոր հարցում
11.07.2022 16:25:15	6 տարեկանից	Այո	դ) իմացական պատրա	նախակրթարանից	Որոշակի հարցումներ
11.07.2022 16:44:02	7 տարեկանից	Ոչ	ա) ֆիզիկական պատրա	նախակրթարանից	Հարցադրումներ,երկխոսություն
11.07.2022 17:19:07	6 տարեկանից	Այո	գ) հուզակամային պատ	նախակրթարանից	Զրույց,խաղ
11.07.2022 17:43:21	6 տարեկանից	Այո	գ) հուզակամային պատ	նախակրթարանից	Գիտելիքների ստուգում չի թույլատրվում
11.07.2022 17:47:21	7 տարեկանից	Ոչ	ա) ֆիզիկական պատրա	մանկապարտեզից	Իմացական որոշակի հարցերով
11.07.2022 18:19:29	7 տարեկանից	Ոչ	ա) ֆիզիկական պատրա	նախակրթարանից	Հարց ու պատասխանի միջոցով
11.07.2022 18:35:07	7 տարեկանից	Ոչ	ա) ֆիզիկական պատրա	նախակրթարանից	Հարցազրույց
11.07.2022 18:36:11	7 տարեկանից	Ոչ	ա) ֆիզիկական պատրա	նախակրթարանից	Հարցազրույց
11.07.2022 18:55:39	7 տարեկանից	Ոչ	գ) հուզակամային պատ	մանկապարտեզից	Հարցում նրա տրամաբանությունը ստուգելու համար:
11.07.2022 19:00:16	7 տարեկանից	Ոչ	դ) իմացական պատրա	նախակրթարանից	առարկային վերաբերվող հարցեր
11.07.2022 19:06:25	6 տարեկանից	Այո	ա) ֆիզիկական պատրա	նախակրթարանից	Tester

Ответы на форму (1)